տուից։ Սակայն այսպէս չէին մտածում Նոր Ջուղայեցիք, որոնք ընդդիմութիւն ցոյց տուին կաթուղիկոսին և աշխատում էին խափանել Ս. Աջի վերադարձը։ Նոքա ասում էին, թէ այս օտար երկրում այլասեռ ազգերի մէջ «ոչ ունիմք զնշան ինչ և առիթ հաստատութեան հաւատոյս» ոչ վանք, ոչ ուխտատեղի, ոչ օրրոց գերեզմաններ, ոչ սուրբ նշաններ, և ոչ էլ մեր հայրերի և պապերի դամբաններ։ «այլ միայն այս սուրբ Աջս է, զորոյ զհրաշագործութիւնս տեսանելով, ասում են, Նորաժաման զաւակաց մերոց։ մնան ի հաւատս քրիստոսական»։ Նոր Ջուղայեցիք այն էլ էին ասում, որ Ս. Աջը բերուած է շահի հրամանով, Նորա հրամանով էլ պիտի տարուի։ Այդպիսի առարկութիւններից չթուլացաւ կաթուղիկոսն, այլ Պարսից մեծամեծներին դիմելով և ընծաներ ու խոստումներ անելով, դրաւեց նոցա սիրտը. յետոյ աղերսագիր տուեց շահին և նորանից ստացաւ արտօնութիւն Ս. Աջը վերադարձնելու։ Ս. Էջմիածին։ Ջուղայեցիք դարձեալ ընդդիմացան. թէև Խօջայ Սաֆարի թոռները, որոնց տանն էր պահւում Ս. Աջը, դիմադրեցին, բայց հայրապետը բարկացաւ նոցա վերայ, նոքա Ս. հօր անէծքից վախենալով, հնազանդեցան։ Կաթուղիկոսն եկեղեցական թափօրով նոցա տանից Ս. Աջը հանեց և դրեց Խօջենց եկեղեցին. մի կիրակի օր ինքը պատարագ արաւ։ Ս. Աջը բա-